ԳՐԱԽՕՍԱԿԱՆՆԵՐ

Հայ Հմայական եւ Ժողովրդական Աղօթքներ (աշխատութեամբ՝ Սարգիս Յարութիւնեանի), ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ Ազգագրութեան Ինստիտուտ, Երեւանի Համալսարանի Հրատարակչութիւն, Երեւան, 2006, 501 էջ:

«Գալուստ Գիւլբենկեան» Հիմնարկութեան Հայկական Բաժանմունքի տնօրէն դոկտոր Զաւէն Եկաւեանի եւ Երեւանի Համալսարանի Հրատարակչութեան տնօրէն Պերճ Ստեփանեանի հովանաւորութեան ու սիրայօժար պատրաստակամութեան շնորհիւ վերջապէս իրեղէն տեսք ստացաւ հայ ժողովրդի բազմադարեան մտաւոր գործունէութեան եւ հոգեւոր գանձարանի եւս մէկ բիւրեղացած ոլորտ՝ հմայական աղօթքների բազմաշերտ աշխարհը: Հազարամեակների միջով հասնելով մեր օրերը՝ բանաւոր աւանդման կամ ցաքուցրիւ գրառումների միջոցով, հայ հին դիցաշխարհի այս ուրոյն բնագաւառն ունեցաւ իր առաջին գիտական մշակումն ու մեկնաբանութիւնը:

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Սարգիս Բարթուղիմէոսի Յարութիւնեանի կազմած սոյն ժողովածուն մեծարժէք արգասիքն է նրա բազմամեայ տքնաջան աշխատանքի, Հնագիտութեան եւ Ազգագրութեան Ինստիտուտում արխիւների մանրազնին ուսումնասիրութեան, ինչպէս նաեւ սեփական գիտարշաւների ընթացքում հաւաքած նիւթի մանրակրկիտ դասակարգման: Երկար տարիներ լինելով նշուած ինստիտուտի բանահիւսութեան բաժնի վարիչ, իսկ այնուհետեւ ինստիտուտի փոխտնօրէն՝ Յարութիւնեանը ոչ միայն հմտօրէն ղեկավարել եւ կազմակերպել է իր ոլորտի աշխատանքները, այլեւ ինքն էլ շարքային մասնակցութեամբ նշանակալից աւանդ է ներդրել բանահաւաքչական ոլորտում:

Սակայն եթէ ուսումնասիրութիւնը սահմանափակուէր միայն այդքանով, այն կը լինէր զուտ բանագիտական բնոյթի մի ժողովածու՝ առանց յաւակնելու խորը վերլուծական հետազօտութիւն պարունակող մենագրութիւն լինելուն: Մինչդեռ Սարգիս Յարութիւնեանը վերոնշեալ ողջ նիւթն անցկացնելով իր էութեան միջով՝ հանրութեան դատին է ներկայացրել իսկապէս նոր մի երեւոյթ հայագիտութեան եւ հայ բանագիտութեան պատմութեան մէջ: Այս առումով՝ *Հայ Հմայական եւ Ժողովրդական Աղօթքներ* աշխատութիւնը ոչ միայն համահաւաք է, որով նմանւում է Ա. Ղանալանեանի *Անանդապատում* եւ իր իսկ հեղինակած *Հայ Ժողովրդական Հանելուկներ* հետազօտութիւններին, այլեւ աղբիւրագիտական եւ առասպելաբանական լուրջ վերլուծութիւններ պարունակող մենագրութիւն է: Նրա գիտական մասը, որոշ առումներով նոր խօսք լինելով նաեւ համաշխարհային բանագիտութեան մէջ, զետեղուած է գրքի առաջին մասում՝ որպէս ներածական ուսումնասիրութիւն, մնացեալ չափով՝ նաեւ ծանօթագրութիւնների մէջ:

Շարունակելով իր աշխատասիրած վերոյիշեալ *Հայ Ժողովրդական Հանելուկներ* (1960, 1965), ինչպէս նաեւ *Անէծքի եւ Օրհնանքի Ժանրը Հայ Բանահիւսութեան Մէջ* (1975) հետազօտութիւններում կիրառուած օգտաւէտ աւանդոյթները՝ Յարութիւնեանն իր նոր մենագրութեան հենքը կազմող համահաւաքի նիւթը համեմել եւ օժտել է բազմաբնոյթ մեկնութիւններով ու ծանօ-

թագրութիւններով: Սրանցում հեղինակի կողմից պարզաբանւում է աղօթքների առանձին տեսակների ձեւաւորման կրօնահաւատալիքային միջավայրը (օրինակ՝ չար աչքի հետ կապուած հաւատալիքները, հմայական կապքի եւ պահպանութեան մասին պատկերացումները եւն.): Աղօթքների այս քննութիւնը զարմանալիօրէն ի յայտ է բերում հայոց վաղնջական առասպելաբանական պատկերացումների մնացուկները (մասնաւորապէս, օրինակ, ամպրոպային առասպելների հետ կապուած):

Հանելուկների, անէծքների, օրհնանքների եւ աղօթքների հանդէպ նշուած մօտեցումների ընդհանրութիւնը՝ առաջին հայեացքից տարբեր ուսումնասիրութիւններում, միանգամայն հասկանալի է դառնում հենց Ս. Յարութիւնեանի բացատրութիւնից յետոյ. «*Հիմնական տարբերութիւնն այն է, որ հմայքներում սիմվոլային պատկերները հանդէս են գալիս արարողութիւնների տեսքով, նախանշանային գուշակութիւններում՝ իրական եղելութիւնների, իսկ հանելուկային բանաձեւերում՝ պատկեր-խօսքի միջոցով: Այդ տարբերութիւնները, հարկաւ, էական նշանակութիւն չունեն երեքի էլ հոգեբանական մեխանիզմի նմանութիւնները հաւաստելու եւ բացատրելու տեսակէտից: Այսպիսի նմանութիւնները վկայում են մի կողմից՝ հանելուկների, հմայքների ու գուշակելի նախանշանների մտածողութեան միեւնոյն՝ սիմվոլային-փոխաբերական բնագաւառին պատկանելու մասին, միւս կողմից նաեւ՝ կիրառական միեւնոյն նպատակներ ունենալը, այն է՝ հանելուկների երբեւէ դիւթահմայական նկատառումներով կիրառուելը, որ հաւաստուած է նաեւ պատմաազգագրական որոշակի փաստերով*» (էջ 20):

Այս առումով՝ կիրառական բանահիւսութեան հիմնական տեսակներ են համարւում հենց աղօթքները, երդումները, անէծքներն ու օրհնանք-բարեմաղթութիւնները: Սրանք անմիջականօրէն կապուած են հմայքի եւ նրանից բխող ծէսի ու արարողութեան հետ՝ ի տարբերութիւն, ասենք, աւանդազրոյցների, որոնք բանարուեստի շատ հին եւ տարածուած տեսակ լինելով հանդերձ՝ չեն կարող կոչուել կիրառական բանահիւսութեան նմուշներ:

Յարութիւնեանի կազմած համահաւաքն, ինչպէս նշուեց, ընդգրկում է ոչ միայն հմայական աղօթքների գրառուած տարբերակների տպագիր եւ արխիւային ողջ ժառանգութիւնը, այլեւ իր եւ իր գործընկերների գրառած՝ երբեւէ չհրատարակուած տարբերակները, ինչպէս նաեւ միջնադարեան ախթարային ժողովածուներից քաղուած նմուշները: Ներկայացուող աշխատութեան մէջ ժողովրդական աղօթքների ամբողջ նիւթը դասակարգուել ու համախմբուել է ըստ կիրառութեան բնագաւառների ու նպատակների՝ հետեւեալ ութ խմբերում.

ա) բուժաղօթքներ (այդ թւում՝ չար աչքի եւ ծննդկանի աղօթքներ),

բ) առողջապահութեան եւ մարմնի մասերի մաքրագործման աղօթքներ,

գ) փորձանք-պատահարների եւ բնական աղէտների կանխման աղօթքներ,

դ) հմայական կապքի եւ պահպանութեան աղօթքներ,

ե) գործնական նպատակների իրագործման աղօթքներ,

զ) երեկոյեան եւ առաւօտեան աղօթքներ,

է) օրուայ տարբեր ժամերի, երազի բարի կատարման, պանդուխտի, տարբեր սրբերի, ծիսական, նորալուսնի աղօթքներ,

ը) զաւեշտական աղօթքներ եւ պարոդիաներ:

Այս խմբերից մի քանիսն օժտուած են յաւելուածներով, որոնք համալրուած են միջնադարում գրաւոր աւանդուած աղօթքներով:

Ինչպէս յայտնի է, նախնադարեան առասպելաբանական մտածողութեամբ մարդն իրեն տակաւին չէր տարանջատում բնութիւնից՝ ընկալելով այն որպէս իր հետ փոխկապակցուած եւ սերտաճած մի օրգանիզմ: Այստեղից էլ սկզբնաւորում է վաղնջական աշխարհընկալման կարեւորագոյն բաղադրիչներից մէկը՝ հմայութիւնը կամ մոգութիւնը, որը կոչուած էր ապահովելու այդ ընդհանուր օրգանիզմի մէկ բաղադրիչի (տուեալ դէպքում՝ մարդու) ազդեցութիւնն ու ներգործութիւնը միւս բաղադրիչների վարքի վրայ:

Հմայական պատկերացումներն ու հաւատալիքները առկայ են եղել դեռ քարանձաւաբնակ մարդու ժամանակներում, երբ ձեւաւորուած չէր մարդկային յօդաբաշխ խօսքը: Սակայն հմայութիւնն իր «վերելքը» ապրեց յատկապէս լեզուների առաջացմանը զուգընթաց, քանի որ վաղնջական մարդու համար իրաքանչիւր բառ, հնչիւն թէ ձայնարկութիւն ունէր արարչագործական, հետեւաբար նաեւ հմայական արժէք ու նշանակութիւն: Հենց այդ ժամանակաշրջանում էլ, ամենայն հաւանականութեամբ, գտնւում են ժողովրդական հմայական աղօթքների արմատները: Յետագայում «հմայութեան դարաշրջանին» փոխարինելու եկած կրօնները անխուսափելի կերպով իրենց մէջ ներառեցին ենթաշերտային հմայական տարրեր ու բաղադրիչներ, որոնք շարունակեցին գոյատեւել նոր ժողովրդական հաւատալիքներում, մարդկանց կենցաղում ու կրօնական ծէսերում՝ որպէս հմայութեան վերապրուկներ ու մնացուկներ:

Մարդկային մտածողութեան եւ հոգեբանութեան վրայ լեզուի զարգացման ունեցած յեղափոխիչ դերի արդիւնքում՝ հմայք կամ մոգութիւն հասկացութիւնն ինքնին տիպաբանօրէն կարելի է բաժանել հետեւեալ հիմնական բաղադրիչների՝ ա) հմայական պատկերացումներ ու հաւատալիքներ, որոնցից ծագում են հմայական արարողութիւնները, բ) հմայական արարողութիւններ, որոնք այդ «տեսական» հաւատալիքների գործնական կիրառումն են ներկայացնում, գ) հմայական արարողութիւններին ուղեկցող անկախ խօսքեր՝ կայուն բանաձեւերի տեսքով, որոնք կարող են հանդէս գալ թէ՛ գրաւոր, թէ՛ բանաւոր (սկզբնապէս, անշուշտ, միայն բանաւոր): Այս երեք հիմնական բաղադրիչներին կարելի է յաւելել նաեւ չորրորդը՝ դ) հմայական արարողութիւններին ուղեկցող զանազան առարկաներ եւ իրեր (յուռութքներ, հմայիլներ, թալիսմաններ եւն.), որոնք օժտուած են զուտ կիրառական-պահպանական գործառոյթներով:

Նախամարդու պատկերացմամբ՝ առարկաների, երեւոյթների, մարդկանց, բոյսերի ու կենդանիների միջեւ գոյութիւն ունեն խորհրդաւոր անտեսանելի կապեր ու առնչութիւններ: Այս հիմքի վրայ են հենց ձեւաւորուել զանազան սնոտիապաշտութիւններն ու հմայական հաւատալիքները: Նման մտածելակերպի պատճառն այն էր, որ նախամարդն ի զօրու չէր ընկալելու առարկաների ու երեւոյթների բուն պատճառահետեւանքային կապը, այլ նրա համար գոյութիւն ունէին լոկ արտաքին մեխանիկական յաջորդականութիւնը եւ «հմայական տրամաբանութեան» վրայ հիմնուած երեւակայական կապը: Նման ըմբռնումից է բխում այն պատկերացումը, թէ որեւէ ցանկալի իրադրութիւն կամ երեւոյթ կարելի է առաջ բերել՝ դրան նախադրելով մէկ այլ գործողութիւն կամ իրադրութիւն:

Ըստ այդմ, հմայութեան հոգեբանական մեխանիզմը բաղկացած է տրամաբանական երեք աստիճանից՝ ա) ցանկութիւն կամ նպատակ, բ) դա իրագործելուն միտուած հմայական արարողութիւն, գ) ակնկալուող հետեւանք: Տարբերութիւնն այստեղ իրական արտադրական-օգտակար գործունէութիւնից (երկրագործութիւն, արհեստագործութիւն եւն.) այն է, որ ակնկալուող արդիւնքը դիտւում է որպէս մարդու եւ գերբնական ուժերի համագործակցութեան հետեւանք: Ընդ որում, սկզբնապէս իրական-արտադրական եւ հմայական գործօնները եղել են շաղկապուած ու միահիւսուած մէկ գործողութեան մէջ՝ յետագայում միայն աստիճանաբար տարանջատուելով:

Այդ տարանջատման ընթացքում էլ հմայութիւնը վերածուել է մի ուրոյն արհեստի կամ արուեստի՝ ի տարբերութիւն առաւել հնագոյն ժամանակների, երբ իւրաքանչիւր մարդ, ըստ էութեան, միաժամանակ նաեւ հմայ էր կամ կախարդ: Այդ հեռաւոր դարաշրջանում գործածուող հմայական աղօթքները ի յայտ էին բերում հմայողի անսահմանափակ հնարաւորութիւնները բնութեան ուժերի վրայ՝ ընդհուպ մինչեւ այն, որ իւրաքանչիւր հմայող ընկալւում էր որպէս դեմիուրգ (արարիչ): Ժամանակի ընթացքում մարդիկ հասկացան, որ իրենցից ոմանք առաւել «արհեստավարժ» են մոգութեան ասպարէզում եւ նրանց հմայական գործողութիւններն առաւել դրական արդիւնք են տալիս: Բնական ընտրութեան արդիւնքում «զտուած» այդ անհատներն էլ դարձան հասարակութեան մէջ առանձին մի խաւ՝ հմայութեան աւանդոյթների կրողներ ու կիրառողներ:

Ինչպէս յայտնի է հոգեբանութեան մէջ, որոշակի պայմանների առկայութեան դէպքում մարդու պատկերացումներն առաջ են բերում նաեւ որոշակի շարժումներ, որոնք կարող են կապուել շրթունքների, լեզուի, ձայնալարերի հետ՝ սկիզբ դնելով խօսքին: Կամ էլ այդ շարժումները կարող են արտայայտուել ձեռքերի, ոտքերի կամ այլ մարմնամասերի միջոցով՝ սկիզբ դնելով գործողութեանը: Առաջին դէպքում հմայական պատկերացումների զուգորդումները վերարտադրւում են սոսկ խօսքով, որից ձեւաւորւում է հմայական բանաձեւը, իսկ երկրորդ դէպքում՝ վերարտադրւում են գործողութեամբ, որից էլ բխում է հմայական արարողութիւնը կամ ծէսը: Այդպիսով, «*Հմայական պատկերացումներն ու հաւատալիքները, հոգեբանական զուգորդումների շնորհիւ վերարտադրուելիս, կամազգայական ուժեղ մղումներից դրդուած՝ առաջ են բերում խօսք եւ արարողութիւն*» (էջ 24), որոնք յաճախ հանդէս են գալիս միահիւսուած:

Շրթունքների շարժումները, ձայնարկութիւններն ու բացականչութիւնները, հնչագաղափարային բառերը երբեք էլ անկախ ձեւով հանդէս չեն եկել. դրանք միշտ էլ օժանդակ դեր են կատարել՝ ուղեկցելով բուն արարողութեանը: Այս առնչութեամբ Ս. Յարութիւնեանը բերում է խիստ բնորոշ մի օրինակ, որը հանդիպում է աշխարհի բազմաթիւ ժողովուրդների մէջ. այսպէս, «*Թու՛, թու՛, թու՛, տաշտի ոռքը մաշի, / Սապոնինը չմաշի*», կամ՝ «*Թիւ՛, թիւ՛, թիւ՛, թիւ՛, / Մեռել՝ մեռելոցին, / Ետ երթաս՝ առաջ չիգաս, / Տուշմընիս դուռ չի գաս*» հմայական բանաձեւերում՝ թքելու գործողութիւնը, իբրեւ չար ուժի սաստման կամ կանխման արարք, համադրուել է հմայական խօսքին որպէս բառահնչիւնային միաւոր եւ դարձել խօսքի բաղադրիչ (էջ 24): Անիմաստ շշունջներն ու բացականչութիւնները յետագայում աստիճանաբար վերաիմաստաւորուել են՝ վերածուելով իմաստալից խօսքերի:

Ինչպէս նշում է Յարութիւնեանը, հմայական խօսքի սկզբնական տեսակները պէտք է լինէին հմայողի ցանկութիւնն ու կամքը արտայայտող պարզունակ բանաձեւերը, առաջին հերթին՝ անէծքներն ու օրհնանքները, ապա երկրորդաբար դրանցից բաղկացած երդումները, որոնցից աստիճանաբար գերաճել են հմայական ծաւալուն բանաձեւերը կամ աղօթքները: Այս եւ մի շարք այլ նկատառումներից ելնելով՝ Յարութիւնեանը եզրակացնում է, որ *«բանաւոր հմայութեան որոշ տեսակներ ի սկզբանէ գոյացել ու կենցաղավարել են արարողութիւններից անկախ»*: Առանձնակի հետաքրքրութիւն եւ արժէք են պարունակում հեղինակի բառաքննական մտորումները տարբեր ժողովուրդների մէջ «խօսք» նշանակող բառարմատների եւ դրանց հոմանիշների վերաբերեալ (էջ 27-29): Դրանցից պարզորոշ երեւում է, որ վաղնջական աւանդական մտածողութեամբ՝ տարբերութիւն չէր դրւում մտքի (համոզմունք), խօսքի եւ գործի միջեւ, ինչը ցայտունօրէն արտացոլուած է *հայերէն* բան հասկացութեան եռիմաստ (միտք, խօսք, գործ) ըմբռնման մէջ:

Այսպիսով, կառուցուածքային իւրայատկութիւնները հաշուի առնելով, Յարութիւնեանը հմայական-կիրառական բանահիւսութեան տեսակները բաժանում է երկու խմբի. ա) հմայական պարզ բանաձեւեր (անէծքներ եւ օրհնանք-բարեմաղթութիւններ), բ) հմայական բարդ բանաձեւեր (երդումներ եւ հմայական զանազան աղօթքներ):

Աղօթք (աղաւթ-ք) բառն ինքը ծագում է *աղաչել* «աղերսել, խնդրել» բառից եւ բառացիօրէն նշանակում է «աղերս, աղաչանք»: Թէեւ ներկայիս *աղօթք* ասելով հասկանում ենք հիմնականում եկեղեցական ու ժողովրդական պաշտամունքային պաղատանքի աղօթքները, սակայն հնում այդ բառեզրով են կոչուել նաեւ հմայական բանաձեւերը (գիր կամ թուղթ ու գիր, հմայիլ): Ի սկզբանէ աղօթել հասկացութիւնն ինքնին ընկալուել է որպէս հմայելու, կախարդելու գործողութիւն, ինչի վկայութիւնն է հայերէնի ժողովրդախօսակցական լեզուում պահպանուած *աղօթած մարդ, աղօթած էշ* դարձուածների «թմրած, ապշած, հլու» նշանակութիւնը, ինչպէս նաեւ աղօթել բառի՝ ընդհանուր «աղօթելով եւ կախարդութեամբ բժշկութիւն անել» իմաստը: Մէկ այլ տեսանկիւնից՝ աղօթքն ընկալուել է իբրեւ անարիւն զոհաբերութիւն, որը փաստօրէն փոխարինել է իրական գործողութեանը՝ ուղղուած գերբնական ուժերին սիրաշահելուն:

Աղօթքները ստորաբաժանւում են կրօնապաշտամունքային (հեթանոսական թէ քրիստոնէական) եւ հմայական աղօթքների: Կրօնապաշտամունքային աղօթքներն առաջին հերթին կապուած են որեւէ որոշակի ծիսակատարութեան, պաշտմունքային արարողութիւնների հետ, որոնք ունեն հանրային բնոյթ, միտուած են հասարակութեան նիւթական կամ հոգեւոր պահանջմունքները բաւարարելուն եւ կատարւում են քրմական կամ եկեղեցական դասի ներկայացուցիչների կողմից: Մինչդեռ հմայական աղօթքները կապ չունեն պաշտօնական արարողութիւնների հետ եւ ունեն անհատական դիպուածային բնոյթ: Ըստ այդմ՝ հմայական աղօթքը կատարում է ոչ-բացայայտ, այլ գաղտնի՝ աղօթողի եւ աղօթքը պատուիրող անձի մտերմիկ, անհատական յարաբերակցութեամբ, ընդ որում՝ առանձին դէպքերում աղօթողն ու աղօթուողը միեւնոյն անձն են լինում:

Տիպաբանօրէն հմայական աղօթքները կարող են լինել. ա) հմայագործի բացարձակ ակտիւութեան աղօթքներ, որոնցում աղօթող անձը հանդէս է գա-

լիս հմայագործի ակտիւ դերով եւ բացառում է գերբնական՝ աստուածային կամ դիւական ոգիների միջամտութիւնը, բ) հմայագործի յարաբերական ակտիւութեան աղօթքներ, որոնցում աղօթող հմայագործը ստիպում է որեւէ դիւային կամ աստուածային ոյժի՝ իրագործել իր ցանկացածը, գ) պաղատանքի աղօթքներ, որոնք կարելի է անուանել պասիւ «հմայագործի» աղօթքներ, քէպէտեւ դրանցում աղօթողն այլեւս արհեստավարժ հմայող անձ չէ, որին դիմում է պատուիրատուն, այլ իւրաքանչիւր սովորական անհատ, որը պարզապէս ապաւինում է Աստծոյ, սրբերի, հրեշտակների զօրութեանը:

Առաջին տիպի աղօթքներն ամենահինն են եւ սերում են նախնական հմայութիւններից, երբ սովորական անհատն ինքն էլ որպէս արարիչ էր հանդէս գալիս, երկրորդ տիպի աղօթքները պատմականօրէն համեմատաբար առաւել ուշ ժամանակների արդիւնք են եւ կազմում են հմայական աղօթքների գերակշիռ մասը (այս տիպին են յարում նաեւ հեթանոսական պաշտամունքային աղօթքները), իսկ երրորդ տիպի աղօթքների թուին են դասւում քրիստոնէական տէրունական աղօթքների ճնշող մեծամասնութիւնը եւ ժողովրդական համաբնոյթ պաղատանքի աղօթքները: Կարելի է ժողովրդական բոլոր աղօթքները բաժանել նաեւ երկու հիմնախմբի՝ հմայական եւ պաղատանքի:

Ժանրային-տիպաբանական կամ կառուցուածքային առումով հմայական աղօթքները լինում են պարզ եւ բաղադրեալ, որոնք իրենց հերթին ունեն բազմաթիւ ենթատիպեր, այն է՝ երկանդամ, եռանդամ, քառանդամ եւ նոյնիսկ աւելի կազմութիւն ունեցող (պարզ տիպերը): Բաղադրեալ տիպերը ձեւաւորւում են երկու հիմնական եղանակով՝ պարզ տիպերի վրայ նորանոր մոտիւներ յաւելելով եւ կրօնաառասպելաբանական զանազան մոտիւների, հաւատալիքների ու պատկերացումների հիման վրայ հիւսուած վիպական իրադրութեան եւ ցանկութեան խօսքի տարբեր ասոյթ-բանաձեւերի բաղարկումով: Վիպական այդ հատուածները յաճախ հմայական աղօթքներին հաղորդում են որոշակի բանաստեղծականութիւն: Օրինակ, չար աչքի խափանման աղօթքներից մէկում ասւում է.

Մեր տան ետի կողմը մի ծով կայ,
Ծովի ետի կողմը մի կալ կայ,
Կալի միջին մի դէգ կայ,
Դէգի միջին եօթ խուրձ կայ,
Եօթ խրձան միջին եօթ հասկ կայ,
Եօթ հասկի միջին եօթ հատիկ կայ.
Հատի՛կ, հատի՛կ, վե՛ր ընկի,
Աչքի՛ հատիկ, վե՛ր ընկի:

Կան նաեւ վիպական իրադրութեամբ այնպիսի հմայական բանաձեւեր, որոնցում բացակայում են ցանկութեան ասոյթները, դեռ աւելին՝ ամբողջ իրադրութիւնը քօղարկուած է այլաբանական թանձր շղարշով՝ թողնելով անգուշակելի հանելուկային պատկերի տպաւորութիւն: Օրինակ՝ միզկապութեան բուժմանն ուղղուած հետեւեալ աղօթքը.

Մի տանն մի կրակ կայ՝ / Կէսը կայ, կէսը չկայ.
Վրէն մի կասկարենք կայ՝ / Կէսը կայ, կէսը չկայ.
Վրէն մի պղինձ կայ՝ / Կէսը կայ, կէսը չկայ.
Վրէն մի խուփ կայ՝ / Կէսը կայ, կէսը չկայ.
Վերնուց մի հաւք է անցկենում՝ / Կէսը կայ, կէսը չկայ:

Ըստ գեղարուեստական յատկանիշների՝ հմայական աղօթքների վիպական իրաղրութիւնները դրսեւորում են ոճաբանական տարբեր ձեւերով.- 1՝ առարկաների եւ արարքների վիպական նկարագրութեամբ, 2՝ դիմումկոչականով, 3՝ երկխօսութեամբ, 4՝ նկարագրութեամբ եւ երկխօսութեամբ, 5՝ նկարագրութեամբ եւ հարցերով, 6՝ ժխտում-արգելումներով եւ հաստատումհերքումներով (էջ 36):

Հետաքրքիր է, որ հմայական աղօթքների ճնշող մեծամասնութիւնն ընդելուզուել է քրիստոնէական սրբազան բանաձեւերով: Այսպէս, բոլոր հմայական աղօթքները նոր ժամանակներում սկսուել եւ աւարտուել են տէրունական «Հայր Մեր» աղօթքով կամ մէկ այլ աղօթքային բանաձեւով (էջ 52): Աղօթելուց առաջ աղօթողը խաչակնքում է իրեն կամ աղօթուողին, երբեմն էլ՝ հմայուող անձին կամ կենդանուն խորհրդանշող առարկան, եւ կամ աշխարհի չորս կողմերը: Աղօթքի սրբազան ազդեցութիւնը զօրացնելու նպատակով աղօթքը պարտադիր կրկնում են երեք, երբեմն հինգ, եօթ կամ ինն անգամ, այսինքն՝ միշտ կենտ սրբազան թուերով: Բանաւոր հմայական աղօթքների մի մասն աւարտւում է քրիստոնէական աղօթքների աւարտին բնորոշ «ամէն» բառով կամ «Յանուն Յիսուս Քրիստոսի» բանաձեւով, իսկ գրաւորները սրանց կարող են յաւելել նաեւ Ս. Երրորդութեան անուանակոչման օրհնաբանական բանաձեւերը:

Այս ամէնը ցոյց է տալիս, որ տիպաբանօրէն սերելով վաղնջական ժամանակներից՝ հմայական աղօթքներից շատերը ենթարկուել են քրիստոնէական վերափոխման ու վերանորոգման, կամ էլ հին նախատիպերով ստեղծուել են ամբողջապէս նոր աղօթքներ: Վերջիններիս բացայայտ վկայութիւններն են հմայական այն աղօթքները, որոնց սիւժէտային հիմքում ընկած են քրիստոնէական հանրայայտ աւանդութիւններ, սրբախօսական ու պարականոն զրոյցներ:

Յարութիւնեանի գրախօսուող աշխատութիւնը բաղկացած է ընդարձակ ներածութիւնից (մօտ 50 էջ), որում ամփոփուած է տեսական-վերլուծական ուսումնասիրութեան մեծ մասը, առաջաբանից (3 էջ), որում տրւում են բուն նիւթի դասակարգման ու մեկնութեան սկզբունքները, այնուհետեւ՝ համառօտագրուած աղբիւրների եւ գրականութեան ցանկից (6 էջ), բնագրերի թեմատիկ ցանկից՝ ըստ աղօթքների կիրառական խմբերի (17 էջ), ինչպէս, օրինակ՝ ատամնացաւի, գորտնուկի, դիւահարի, սեռական կապքի արձակման, մանկան լոգանքի, դաշտամկների դէմ, ծիածանը ծագելիս, շատախօսին լռեցնելու եւն., ապա՝ աղօթքների սկզբնատողերի այբբենական ցանկից (թուահամարներով) (13 էջ), բնագրերից (130 էջ), որոնք ընդգրկում են 463 աղօթք՝ աւելի քան 760 տարբերակներով, ընդ որում իւրաքանչիւր աղօթքի եւ նրա տարբերակների տակ պարտադիր նշում է սկզբնաղբիւրը, իսկ վերջում՝ ծանօթագրութիւններից եւ մեկնաբանումներից (237 էջ), որոնցում տրւում են համառօտ տեղեկութիւններ իւրաքանչիւր աղօթքի բանասացի, բանահաւաքի եւ գրառման հետ կապուած հանգամանքների վերաբերեալ, ինչպէս եւ կցւում են համահաւաքի հեղինակի զանազան մեկնութիւններն ու բացատրութիւնները, այնուհետեւ՝ բարբառային, օտար եւ խրթին բառերի բառարանից (25 էջ), աղօթքների տարածման ազգագրական շրջանների ցանկից (3 էջ), անուանացանկից (15 էջ), անգլերէն եւ ռուսերէն ամփոփումներից (մէկական էջ):

Սարգիս Յարութիւնեանը գրախօսուող աշխատութեան նիւթերի հաւաքումը սկսել է դեռ 1960ականներին եւ աշխատանքը որոշ ընդհատումներով շարունակել յաջորդ տասնամեակների ընթացքում: Անցումային շրջանի հետ կապուած դժուարութիւններն ու խոչընդոտները չեն կասեցրել նրա գիտական հետազօտութիւնների առաջընթացը: Եւ այսօր, շարունակելով ղեկավարել ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ Ազգագրութեան Ինստիտուտի բանահիւսութեան բաժինը, Յարութիւնեանն իր ներկայութեամբ իսկ ոգեշնչում ու քաջալերում է գործընկերներին: 2008ին բոլորելով իր 80ամեակը՝ հայ բանագիտութեան եւ առասպելաբանութեան նահապետը տակաւին շարունակում է իր գիտական պրպտումները՝ միաժամանակ երիտասարդներին հաղորդելով իր գիտական փորձն ու վերլուծական մտորումները:

Տորք Դալլալեան